

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ



Տպագրվում է հայոց գրեթե գյուտի 1600-ամյակի առթիվ

ՆԱՐԵԿԱՑՈՒ ԲԱՌԱՇՆԱՐՅՈՒՆ

Գրիգոր Նարեկացու լեզվի, ոճի, տաղաչափության, բառապաշարի և ընդհանրապես բանարվեստի այլևայլ կողմերի մասին հատկապես վերջին տասնամյակներում ստեղծվել է բավական հարուստ գրականություն¹: Ընդ որում, բոլոր հեղինակները միաձայն շեշտում են Նարեկացու լեզվի բացառիկ գեղեցկությունը, բառապաշարի արտասովոր հարստությունը, բառաստեղծման աներևակայելի հմտությունն ու կարողությունը: Ի մի բերելով այդ բոլոր կարծիքները՝ նարեկացիագիտության երախտավոր Ա. Ղազիբյանը գրում է. «Հայոց լեզուն չունի ասելի շոյլ սերմնացան և ասելի բարձրարուեստ ճարտարապետ, քան Գրիգոր Նարեկացին: Մայրենի լեզուի անմարելի սիրոյ մեջ յաւերժացել է Նարեկացու անպարագիծ հայրենասիրությունը: Նարեկացու Մատենանը հայոց լեզուի կենդանի յարակայութեան յուշարձանն է նաեւ»²: Այսուհանդերձ պետք է ասել, որ, ցավոք, առայժմ հրապարակի վրա չկա Նարեկացու ստեղծած բառերի քիչ թե շատ ամփոփ ցանկ կամ բառարան, որը հնարավորություն կտար ուսումնասիրելու բառաստեղծման նարեկացիական սկզբունքներն ու մեթոդները, բացահայտելու լեզվաշինարարական նրա արվեստի գաղտնիքներն ու խորհուրդները, իսկ դա շա՛տ կարևոր է պարզելու համար, թե Նարեկացու ստեղծած բառերից որոնք են մինչև օրս մնացել կենսունակ ու գործածական, իսկ որոնք՝ հնացել ու մոռացվել: Օրինակ, ինչո՞ւ չիմանա ընթերցողը, որ այսօր գրավոր ու բանավոր խոսքում հաճախակի գործածվող անբերրի, աստուածընդդէմ, արտաքնայարդար, արփիաճաճանչ, դժվարաթարգմանելի, ելումուտ, եղերերգութիւն, զուգապարութիւն, ընդմիջարկութիւն, իրավամերժ, համաճարակ, համապարփակ, հրապարակաւ, մահագուշակ, ջութակ, սկզբնապատճառ, ստուերային, տիրադաւ, օղաչու և համանման շատ ու շատ այլ բառեր ստեղծել է հենց Գրիգոր Նարեկացին:

Ավելին, նման աշխատանքի բացակայությունը մի կողմից ներկայիս ընթերցողին զրկում է Նարեկացու լեզվաշինական հիրավի բացառիկ արվեստը գործնականում յուրացնելու հնարավորությունից, մյուս կողմից պատճառ է դառնում գիտական առանձին անճշտությունների ու թյուրիմացությունների: Օրինակ, եթե Վ. Առաքելյանը, հիմք ընդունելով «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» կոթողային գրքի տվյալները, շուրջ երեք տասնամյակ առաջ գրել է, որ «Մատենան ողբերգութեան» ստեղծագործության մեջ Նարեկացին «կազմել է 700-750 բառ. սա նորակազմ բառերի մի այնպիսի քանակ է, որ հազվագյուտ հեղինակի երկերում կարելի կլինի տեսնել»³, ապա ուրիշները, հիշելով Վ. Առաքելյանի հենց այս միտքը, ասում են, որ ընդհանրապես Նարեկացու նորաբանությունների թիվն անցնում է 700-ից⁴:

¹ Տե՛ս, օրինակ, Վ. Առաքելյան, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Եր., 1975, Գրիգոր Պըլտեան, Գրիգոր Նարեկացի լեզուի սահմաններում մէջ, Վենետիկ, 1985, Ա. Ղազիբեան, Գրիգոր Նարեկացու բանաստեղծական արուեստը, Ամթիլիաս, 1995, Հր. Թամբրազյան, Նարեկյան դպրոցը, Եր., 1999, Գ. Խաչատրյան, Լ. Պետրոսյան, Նարեկացի՝ բառաստեղծ, «Վասն արդարութեան», թիվ 45, սեպտեմբեր, 2003 և այլն:

² Ա. Ղազիբյան, ԱԶՎ. աշխ., էջ 41:

³ Վ. Առաքելյան, ԱԶՎ. աշխ., էջ 42:

⁴ Տե՛ս Գ. Խաչատրյան, Լ. Պետրոսյան, ԱԶՎ. աշխ., էջ 37:

Վերջապես, նման իրավիճակում հնարավոր չէ պատասխանել մի շատ կարևոր հարցի. արդյոք Գրիգոր Նարեկացին իր մյուս ստեղծագործություններում նույնպես դրսևորե՞լ է հայոց լեզվի «շոալլ սերմնացան»-ի և «բարձրարվեստ ճարտարապետ»-ի զարմանահրաշ կարողությունը, թե՞ սահմանափակվել է միայն Մատյանով: Այս և համանման մի շարք հարցերի պատասխանն ստանալու համար որոշեցինք «Հայկազեան լեզվի բառգրքից» դուրս գրել միայն Նարեկացիով վկայված բառերը: Արդյունքում ստացված բառացանկն աներևակայելիորեն գերազանցեց սպասումներս. նրանում ընդգրկված է 1771 բառ, որոնցից 825-ը բանաստեղծը գործածել է Մատյանում, իսկ 946-ը՝ մյուս երկերում:

Համոզված եմ, որ ընթերցողի դատին ներկայացվող բառացանկն անպայման կարծանանա լեզվաբան մասնագետների ուշադրությանը, կառուս մասնագիտական քննության առարկա, իսկ մինչ այդ կցանկանալի ասել հետևյալը.

1. Պարզվում է, որ բառը Նարեկացու ստեղծագործական համակարգում ունի նույն նշանակությունն ու կարևորությունը, ինչ ատումը՝ նյութի, իսկ կենդանի բջիջը՝ օրգանիզմի համար: Ուստի Նարեկացուն ճիշտ հասկանալու համար նախ և առաջ պետք է ուսումնասիրել նրա բառաշխարհն ու դրա ստեղծման արվեստը:

2. Սույն բառացանկից աներկբա հետևում է, որ բառաստեղծմամբ Նարեկացին զբաղվել է իր բոլոր ստեղծագործություններում և ստեղծագործական հասունացման հետ միասին հղկվել, կատարելագործվել ու աննախադեպ զարգացման է հասել նաև բառաստեղծական արվեստը, որը բանաստեղծի գլուխգործոց Մատյանում փայլատակել է իր ողջ հզորությամբ՝ տալով ավելի քան 820 նորաստեղծ բառ, չհաշված այն բառերը, որոնք վկայված են Մատյանով և Նարեկացու այլ ստեղծագործություններով: Դրանցից շատ-շատերը գործածական են նաև ներկայումս: Ըստ այդմ, սույն բառացանկը կարող է օգտակար լինել նաև բանաստեղծի ստեղծագործությունների ժամանակագրության, թեկուզև մոտավոր, վերականգնման գործում: Օրինակ, եթե մինչև վերջերս՝ Նարեկացու գրական առաջնեկ համարվող «Մեկնություններ գրգոց երգոյն Սողոմոնի» աշխատությունից բառարանում միայն դրանով վկայված բառերի թիվը հասնում է 57-ի, իսկ դրան նախորդած «Համառոտիք բան խրատու»-ից վկայվածներինը՝ 17-ի, ապա իրենց ծավալով դրանցից կրկնակի պակաս Առաքելոց և Յակոբ Մծբնեցու ներբողներից յուրաքանչյուրում այդօրինակ բառերի թիվը անցնում է 100-ից, համապատասխանաբար՝ 104 և 101: Ավելին, Մատյանում ամենից շատ կրկնվում են հենց այս ստեղծագործություններում գործածված նորաստեղծ բառերը, իսկ դա նշանակում է, որ ժամանակագրական տեսանկյունից դրանք ավելի մոտ են Մատյանին: Մինչդեռ Երգ երգոցի մեկնությունը, լինելով համեմատաբար վաղ շրջանի ստեղծագործություն, նրանում առկա նորաստեղծ բառերից և ոչ մեկը չի կրկնվում Մատյանում:

3. Խնդրո առարկա բառացանկը կարող է լուրջ կովաններ տալ ավանդաբար Նարեկացուն վերագրված առանձին աշխատությունների հեղինակալին պատկանելության հարցը լուծելու համար: Օրինակ, բառացանկս ամրապնդում է «Համառոտիք բան խրատու» երկի հեղինակի և դրա ստեղծման ժամանակի մասին իմ արտահայտած

⁵ Ինչպես ցույց ենք տվել մեր «Գրիգոր Նարեկացու գրական ժառանգության հարցի շուրջ» հոդվածում (տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 2004, թիվ 1, էջ 67-84), անվերապահորեն Նարեկացու գրչին է պատկանում նաև նարեկացիագետների կողմից վաղուց ի վեր վիճարկվող «Համառոտիք բան խրատու» բարոյափիլիսոփայական մեծարժեք երկը, որը գրվել է Երգ երգոցի մեկնությունից առաջ: Ի դեպ՝ մեր տեսակետը լիովին պաշտպանել է Նարեկացու և Նարեկյան դպրոցի գրական ժառանգության քաջագիտակ մասնագետ Հ. Թամրազյանը, որը «Գրիգոր Նարեկացին և նեոպլատոնականությունը» արժեքավոր աշխատության մեջ (Եր., 2004) խնդրո առարկա երկը վերլուծում է որպես անվերապահորեն Նարեկացու գրչին պատկանող գործ:

տեսակետը՝ Այս առումով քացառիկ կարևորություն ունի լուսանկար քառը, որը բառ-գրքում վկայված է միայն Անանիա և Գրիգոր Նարեկացիներից բերված օրինակներով: Ընդ որում, Գրիգոր Նարեկացուց բերվածներից մեկը վերցված է «Համառոտիք բան խրատու» աշխատությունից, իսկ մյուսը՝ Խաչի ներքողից: Սա, թերևս, նշանակում է, որ տվյալ քառն ստեղծվել է հենց Նարեկյան դպրոցում, ուստի կարևոր չէ, թե ո՛վ է առաջինը գործածել այն՝ ուսուցիչ Անանիա Նարեկացին, թե աշակերտ Գրիգոր Նարեկացին: Նույն ձևով սպիտակեթանգ քառը վկայված է միայն Գրիգոր Նարեկացու Խաչի ներքողով՝ «Ի կերպ պատկերի դիմաց քարտեանի սպիտակեթանգ ըղձալին դաշտի (կամ դաշտաց)» և «Համառոտիք բան խրատու» երկով՝ «Լուսապայծառ և սպիտակեթանգ գործովք ի միջօրեայ գալստեան տեսոն»:

Վերջապես, ոսկիանման քառը թեև վկայված է միայն «Համառոտիք բան խրատու» երկով, բայց այն առկա է նաև «Ի վեր համբառնամք արդ մաղթանաւք ըզձայնս» սկսվածքով փոխում՝ «Ոսկիանըման եւ հրատեսակ արեամբ»: Կարծում եմ, ասվածը բավական է համոզվելու, որ, իսկապես, ներկա բառացանկը կարող է օգտակար լինել Նարեկացու առանձին աշխատությունների հեղինակային պատկանելության հարցը լուծելիս:

4. Բառացանկն ցրում է նարեկացիագիտության մեջ ավանդույթի ուժով գոյատևող այն թյուր կարծիքը, որ իբր Մատյանի ՂԲ և ՂԳ գլուխները հավելել են ուրիշները: Իրականում պարզվում է, որ նախ՝ Նարեկացու բառաստեղծական արվեստը Մատյանում ամենից ուժգին փայլատակել է հենց այս գլուխներում՝ ՂԲ գլխի նորաստեղծ բառերի թիվն անցնում է 50-ից, իսկ ՂԳ գլխինը՝ 100-ից: Մինչդեռ ուրիշ ոչ մի գլխում այդօրինակ բառերի թիվը չի անցնում նույնիսկ 40-ից: Երկրորդ՝ ՂԲ և ՂԳ գլուխներում կրկնվում են Մատյանի նախորդ գլուխներում և Նարեկացու վեց այլ երկերում գործածված 25-ից ավելի նորաստեղծ բառեր, որոնք անառարկելի են դարձնում խնդրո առարկա գլուխները Նարեկացուն պատկանելու փաստը:

5. Բառացանկը ի հայտ է բերում Նարեկյան դպրոցի բառաստեղծման առնվազն երկու կարևոր սկզբունք. ա) դպրոցի ներկայացուցիչները, իբրև կանոն, ջանում են նույն նախադասության մեջ գործածել նորաստեղծ շատ բառեր, ընդ որում, որքան հնարավոր է իրար հարևանությամբ: Օրինակ՝ բառգրքում հրաթաղանթ քառը վկայված է միայն Անանիա Նարեկացու «Բողոքոք բոցափայլ հրաթաղանթ խարսխի ևն» արտահայտությամբ, որտեղ նորաստեղծ է նաև բոցափայլ քառը: Գրիգոր Նարեկացին այս սկզբունքը հասցնում է կատարելության և երբեմն նույն նախադասության մեջ կարող է գործածել մեկ տասնյակից ավելի բառ: Օրինակ՝ Ապարանից խաչի պատմության մեջ գրում է. «Եւ տնկեաց հաստատեսց և մշտնջենատր հիմնեցոց խիտս բիրաւորաց բուսոց անտառաց, ծառս գեղասաղարթոս, շնորհաշառաւիղոս, ամբարձուղէշս, հաստատեղունս, մարդադարմանս, բազկաստածոս, աճունաճիղս, վայելչատերևս, բարերողոքոք բոյսս վարսաւոր փայտից, այլայլասեռ տարազոց մրգոց, համեղահամ դիրամոքելիս կրից կոկորդաց: Եւ ևս քան զևս յանախեաց ի ցեղից ցեղից ցանկալեաց ցցեալ ի գետինն գիրապարարս արգաւանդահողս տենչալի վայրից, իբրև զծառսն տեսոն և զմայրսն Լիբանանու լերիցն Օրորայ՝ առատապէս պայծառազարդեաց, տունկս բերրեաց բերողաց բարեաց, ծաղկընճիղս՝ պտղածինս՝ արմախարիսխս՝ մրգամատոյցս՝ պատուաստակիրս՝ պտղապարզևս. անդս ամենունակս ջրահոսս և շուշանափայլս. սահմանս վտակարբոս՝ ուղխապարարս՝ անձրևասնունդս՝ ցողամատոյցս»⁶: Այստեղ ընդգծված բոլոր բառերը (21) բառգրքում վկայված են հենց այս նախադասություններով, բացի ամբարձուղէշ բառից, որը բանաստեղծը գործածել է նաև Առաքելոց ներքողում և Մատյանում: Ավելին, բարերողոքոք քառը

⁶ Մանրամասն տե՛ս Լ. Ղ. Միրզոյան, նշվ. աշխ.:

⁷ Մթրոյն հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք, Վեներտիկ, 1840, էջ 384: Այսուհետև՝ Գր. Նարեկացի, Մատենագրութիւնք..., և էջը:

վկայված է միայն Նարեկացու այս օրինակով և XIII դարի մատենագիր Յովհաննես Գառնեցիով: Ըստ այսմ, հիմք ընդունելով Նարեկացուն վերագրվող երկու այլ աշխատություններից բերված համապատասխան օրինակները («Արքեպյ աստուածանան և հրագունեալ արինակներպին» և «ԶԺամանակ աղօթիցն, յորժամ ոչ լինիցի յակամայ ինչ խափանումն, մի՛ թերաբանս և թերակարգս և զպակասագոյնն փութամք կատարել»), որոնք պարունակում են անմիջական հարևանությամբ մեկական զույգ նորաստեղծ բառ, կարող ենք ասել, որ դրանց հեղինակը Նարեկացին է: Հետևաբար, հիմնավոր չեն այդ կապակցությամբ առանձին հայագետների արտահայտած տարակուսանքները: Հարկավ, կան համանման այլ փաստեր ևս, որոնց վրա ներկա դեպքում ծանրանալու հարկ չեն տեսնում: Բ) Եթե վաղ շրջանում դպրոցի առաջին ներկայացուցիչ Խոսրով Անձնացին հիմնականում ստեղծել է ածանցավոր և երկարմատ նոր բառեր, ապա Անանիա Նարեկացին բառաստեղծման ծանրության կենտրոնը տեղափոխում է բառաբարդման վրա և ասես չբավարարվելով երկարմատ բառերի ստեղծմամբ՝ փորձում է կերտել նաև եռարմատ բառեր (տե՛ս օրինակ՝ բարձրավանդայարկ, շքեղագորդափայլ և այլն): Բնավ պատահական չէ, որ «Հայկազեան լեզուի բառգրքի» հեղինակները Անանիա Նարեկացու երկը գնահատել են «պերճ և փառացի ոճով, հանդերձ անսովոր բարդութեամբք բառից» ձևով (Ռ. 1, էջ 9, ընդգծ. իմն է, - Հ.Մ.): Գրիգոր Նարեկացին, արդեն զարգացնելով ուսուցչի բառաբարդման սկզբունքը, ստեղծում է եռարմատ բազմաթիվ բառեր, օրինակ՝ ամրավերարկու, թեւատրոհաթեւ, եռանձնաթիւ, երեքփառատրեան, զուգապարակցեմ, ծաղկայօրինուորակ, ծաղկաւարտակիտեալ, կենսխրախոյս, ճառագայթանշոյլ, շրթնաշղթայաշար, փայլակնանշոյլ և այլն, իսկ երբեմն էլ՝ նույնիսկ քառարմատ բառեր, օրինակ՝ դանդաճաւանդակապ:

Բառացանկը կազմված է ըստ աշխատությունների, իսկ վերջիններս դասավորված են ժամանակագրական կարգով, որը, հասկանալի է, մասամբ պայմանական է, որովհետև Նարեկացու գրական հարուստ ժառանգության ոչ բոլոր ստեղծագործությունների գրության թվականն է հայտնի: Ստուգապես գիտենք միայն, որ «Երգ երգոցի մեկնությունը» գրվել է 977 թ., իսկ Մատյանը՝ 1000-1003թթ.: Ունենալով բանաստեղծի ստեղծագործությունների ժամանակագրական ստորին և վերին սահմանները՝ մոտավոր ձևով կարելի է որոշել նաև մյուսների ստեղծման ժամանակը: Ըստ այդմ, առաջին տեղում դրված են Տաղերից, իսկ երկրորդ տեղում Գանձերից բերված բառերը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ իբրև փոքր չափի ստեղծագործություններ՝ դրանց գոնե մի մասը բանաստեղծը պետք է որ գրած լինի ավելի վաղ հասկանում, այսինքն՝ Երգ երգոցի մեկնությունից առաջ, որը գրել է 32 տարեկանում: Բնականաբար Նարեկացու նման բացառիկ հանճարը, եթե ստեղծագործել սկսած լիներ թեկուզև 20 տարեկանում, ապա 12 տարում՝ մինչև 977թ., գրած կլիներ զգալի թվով Տաղեր ու Գանձեր: Ի դեպ, Տաղերի ու Գանձերի ոչ բոլոր նորաստեղծ բառերն են արտացոլված բառգրքում: Բանն այն է, որ բառարանն սկսելիս հեղինակների տրամադրության տակ եղել են դրանցից քչերը, իսկ հետագայում՝ «ի ժամ տպագրութեան իս տառի գործոյս՝ հասին,- հայտնում են բառարանագիրները,- ի վեր ձեռս և այլ տաղք իւր նովին ճարտարութեամբ: Գտաք և ի միում հին գանձարանի զգանձ սրբոյս ի վերայ առաքելոց և մարգարէից: Ժամանակն յայտնեսցէ և այլ ինչ բազում» (Ռ. 1, էջ 16): Իսկապես, մինչև օրս ի հայտ են եկել բազմաթիվ նոր տաղեր ու գանձեր¹, որոնց նորակազմ բառերը, բնականաբար, բացակայում են բառարանում: Ավելին, նույնիսկ բառարանագիրների օգտագործած առանձին ստեղծագործություններում եղած ոչ բոլոր նորաստեղծ բառերն են տեղ գտել բառգրքում: Օրինակ, «Տաղ Գրիգորի

¹ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, աշխատասիրությանը Արմինե Քյոշեկեյանի, Եր., 1981:

Նարեկացույ, ի յարութիւն Ղազարու՝ ստեղծագործության նորակերտ բառերից բառ-գրքում չկան ակնաքթիթ, աղէտակոծ, հեղինատրեայ, վաղաւետ, տաւիդապճիո և ցոփհընըթաց բառերը: Այստեղից հետևում է, որ ընթերցողի դատին ներկայացվող բառացանկը կարող է լրամշակվել ու հարստացվել բնագրերից քաղած նման բառե-րով:

Երրորդ տեղում դրված են միայն «խրատական բանք» վերնագրով աշխատու-թյամբ վկայված բառերը, որոնք ընդամենը 13-ն են: Ինչպես արդեն ասվել է, ստեղ-ծագործական հասունացման հետ մեկտեղ, բանաստեղծը կատարելագործել է նաև բառակերտման արվեստը: Հետևաբար ենթադրելի է, որ ամենասակավաթիվ նորաս-տեղծ բառեր պարունակող աշխատությունը պետք է որ ստեղծած լինի ավելի վաղ: Ըստ այդմ, չորրորդ տեղում դրված է «Համառօտիւք բան խրատու» աշխատությունը, որը գրել է անպայման Երգ երգոցի մեկնությունից առաջ, և հենց դրա հիման վրա էլ Գուրգեն-Խաչիկ Արծրունի թագավորը բանաստեղծին պատվիրել, մասամբ և պար-տադրել է գրել Երգ երգոցի մեկնությունը⁹:

Հինգերորդ տեղում դրված է «Մեկնութիւն Ո՛վ է դա ընթերցուածոյն Յոբար» (բառգրքում կարճագրված է՝ Յովէդ) աշխատությամբ վկայված նորաստեղծ բառերի ցանկը: Այն իր ընդգրկած բառաքանակով (ընդամենը՝ 50) փաստորեն նախորդի գրեթե եռապատիկն է, իսկ ծավալի մասին հնարավոր չէ դատել, որովհետև պահ-պանվել է մեկ ձեռագրով, երբեք չի հրատարակվել և այժմ գտնվում է Վենետիկի Մխի-թարյան միաբանության ձեռագրատանը: Այն ընդօրինակվել է 1299 թ. Կլիկիկայի հարձրբերդ դղյակում և մեզ է հասել բավական վնասված:

Վեցերորդ տեղում Երգ երգոցի մեկնությամբ վկայված բառացանկն է, որն ընդ-գրկում է 57 բառ, իսկ աստուածապարգեւակ բառը միաժամանակ վկայված է այս և Գանձ առաքելոց ստեղծագործությամբ: Հետևաբար, ամբողջը կազմում է ընդամենը 58 բառ, որը, հաշվի առնելով տվյալ աշխատության ծավալը, էապես զիջում է հետա-գա ստեղծագործությունների նորակերտ բառերի քանակին:

Վերջին երկու աշխատությունը, լինելով նույնաբնույթ, նորաստեղծ բառամթեր-քով գրեթե հավասար են, համապատասխանաբար՝ 48 և 58, ուստի որքան տրամա-բանական է դրանց ներկա դասավորությունը, նույնքան էլ անտրամաբանական չէր լինի հակառակ հերթագայությունը, այսինքն՝ եթե «Յովէդը» հաջորդեր «Երգ երգոցի մեկնությանը»:

Հաջորդը «Ապարանից Ս. Խաչի պատմություն» և սրան կից Խաչի ներքող ստեղծագործություններով վկայված նորաստեղծ բառերի ցանկն է, որը ամփոփում է ավելի քան 300 բառ: Փոքր-ինչ տարօրինակ է, որ թեև Նարեկացին այս երկուսը և Աստվածածնի ներքող ստեղծել է որպես մեկ միասնական ամբողջություն, բայց բա-ռարանագիրները առաջին երկուսը բառարանում ներկայացրել են միասին՝ «Խչ» նշումով, իսկ երրորդը՝ առանձին՝ «Կուս» նշումով: Այսպիսով, «Ապարանից Ս. Խաչի պատմության» մեջ և նրան կից երկու ներքողներում միասին վերցրած՝ Նարեկացին ստեղծել է 386 բառ (304+82=386): Եթե հաշվի առնենք այս երեք ստեղծագործության ընդհանուր ծավալը, որը Նարեկացու մատենագրական ժառանգության՝ 1840 թ. վե-նետիկյան հրատարակության մեջ կազմում է ընդամենը 52,5 էջ (տե՛ս էջ 371-423), ին-չը գրեթե երկու անգամ պակաս է Երգ երգոցի մեկնությունից, ապա կարող ենք ասել, որ Նարեկացու բառակերտական արվեստն այստեղ հասել է ամենախաղեպ բարձրու-թյան՝ տալով արտասովոր հարուստ արտադրանք: Ավելին, նույնիսկ Մատյանը ծա-վալի ու նորաստեղծ բառերի հարաբերությամբ էապես զիջում է խնդրո առարկա ե-ռագրությանը: Բայց կա նաև հարցի մյուս կողմը. վերջիններին հաջորդած ստեղծա-գործություններում, հատկապես Մատյանում, Նարեկացու կերտած բառերն անհամե-մատ ավելի տխուր ու մոռյալ գույն ունեն, քան մինչ այդ ստեղծածները: Ի հաստատումն

⁹ Տե՛ս Հ. Միրզոյան, Աջվ. աշխ:

ասվածի՝ բերենք մի քանի օրինակ. Ապարանից խաչի պատմության և նրան կից ներբողների ցանկում կան, ասենք, բիրաբեղուն, բիրակաճառ, գերաշխարան, դաստիարակարան, մարտիրոսարան բառեր, մինչդեռ Մատյանում ունենք նույն արմատով կամ ածանցով կազմված այսպիսի բառեր՝ բիրակործան, բիրամասնեայ, դատապարտարան, մահակերպարան, մահապարտարան բառերը: Վերջին հինգ բառից բիրամասնեայ-ն կարծես հակասում է մեր դրույթին, բայց տեքստում վերջինս նույնպես ունի բացասական նրանգ, որովհետև մարդկային բնությանը ներհատուկ է համարում «ամբոխութիւն և բիրամասնեայ հակառակութիւն» (Բան, Ղ Գ, ԺԱ): Սա նույնպես խոսում է բանաստեղծի ունեցած հոգեկան ցնցումների և ըստ այդմ՝ հոգեվիճակի կտրուկ փոփոխության մասին: Հարցեր են սրանք, որոնք կարոտ են հանգամանալից ուսումնասիրության, որի համար ներկա բառացանկը կարող է հարուստ նյութ տալ:

Նարեկացու կենսագրությունից հայտնի է, որ Ապարանից խաչի պատմության և նրան կից ներբողների ավարտից հետո ինչ-ինչ պատճառով բանաստեղծն առժամանակ ընդհատել է ստեղծագործական աշխատանքը: Այդ մասին վկայում է հենց ինքը՝ բանաստեղծը: Բանն այն է, որ եթե այս երեքի համար թողած «Յիշատակագիր պատասխանոյ Սորին ընծայական գրոյ երջանիկ և շնորհընկալ Տեառն Ստեփանոսի, յերեսաց նորին հոգիաբուղիսն վարդապետի» մեկ միասնական պատասխան-գրության մեջ ասում է, «որ յարածամ դեգերիմ յընթեռնուլմ», ասպա դրան հաջորդած Առաքելոց ներբողի սկզբում, դիմելով առաքյալներին, գրում է. «Քանզի առ ձեզ և յաղագս ձեր ի դադարմանէ լոռութեան շարժեալ կարգ բանիս»՝ ի գովեստ փառաց մեծութեան վեհին հաճութեան, անասանելի դրութեամբ հիմնացեալ միշտ կառուցանի»¹⁰ (ընդգծ. իմն է, - Հ.Մ.): Գրեթե նույնն է ասում նաև Մատյանի ՂԲ գլխում, որտեղ, դիմելով Աստծուն, ծնրադիր երկրպագում է նրան, «որ այժմէն ցուցեր համայն յայտնապէս զարինակ ահեղ բարբառոյն մեծի աւուրն յարութեան, կենդանացուցեր ի դադարմանէ դժոխական անբանութենէ, ի խնդիր էլեալ կոչեցեր զպակասամիտս ի գինդ ուրախութեան»¹¹ (ընդգծ. իմն է, - Հ.Մ.):

Դեռևս ականավոր հայկաբան և նարեկացիագետ Գ. Ավետիքյանը, ուշադրություն դարձնելով վերը բերված «ի դադարմանէ լոռութեան շարժեալ կարգ բանիս» արտահայտության վրա, եզրակացրել է, որ վերոհիշյալ երեք ստեղծագործությունից հետո բանաստեղծի կյանքում տեղի ունեցած ստեղծագործական դադարն ավարտվել է հենց Առաքելոց ներբողով¹²:

Ինչ վերաբերում է Մծբնացու ներբողին, ապա վերջինիս գրության ժամանակի հարցում կան որոշ տարակարծություններ: Օրինակ, Պ. Խաչատրյանը, հաշվի առնելով ինչ-ինչ հատկանիշներ, սխալ չի համարում «կարծել, որ այն ներբողի տեսակում գուցեև Նարեկացու առաջին փորձերից է, մյուսներից ավելի վաղ գրված»¹³: Ընդհակառակը, հիմք ընդունելով նրա նորակերտ բառերի հաճախակի կրկնությունը Առաքելոց ներբողում և Մատյանում՝ գտնում են, որ այն գրվել է Առաքելոց ներբողից հետո, բայց Մատյանից առաջ, ուստի դրանում առկա նորակերտ բառերի ցանկը գետեղված է Առաքելոց ներբողի և Մատյանի միջև:

Միայն Մատյանով վկայված բառացանկից հետո գետեղված են «Տարբեր երկերով վկայված բառերը», այսինքն՝ դրանք այն բառերն են, որոնք բառգրքում վկայված են Նարեկացու երկու և ավելի ստեղծագործությամբ: Անշուշտ, նման բառերը կարելի էր մտցնել այն ստեղծագործության բառացանկի մեջ, որտեղ դրանք գործածվել են

¹⁰ Գր. Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 424:

¹¹ Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան, աշխատասիրությանը՝ Պ. Ա. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Եր., 1985, էջ 613:

¹² Տե՛ս «Նարեկ աղօթից, համառօտ եւ գոուշաւոր լուծմամբք, բացայայտեալ միանգամ եւ այժմ երկրորդ անգամ յաւելուածով, աշխատասիրութեամբ նորին տեառն Ռ. Գաբրիէլի Աւետիքեան աթոռակալ վարդապետի», Վեներտիկ, 1827, էջ 437:

¹³ Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, գիրք առաջին, Ա. Էջմիածին, 1996, էջ 87:

առաջին անգամ: Բայց նախ՝ միշտ չէ, որ հնարավոր է դա անել, որովհետև կան բաներ, որոնք վկայված են մեկից ավելի տաղով կամ զանազան, իսկ վերջիններիս գրության ժամանակագրությունը առայժմ մնում է անհայտ: Երկրորդ, այդ դեպքում դժվար կլիներ որոշել բանաստեղծի երկերի իրար հետ և հատկապես Մատյանի հետ ունեցած բառամթերքային ընդհանրությունը:

Վերջապես, միայն Նարեկացու ստեղծագործություններով վկայված բառացանկերից հետո, իբրև հավելված, զետեղված են նաև Խոսրով Անձևացիով, Անանիա Նարեկացիով, Խոսրով Անձևացիով և Գրիգոր Նարեկացիով և Անանիա Նարեկացիով ու Գրիգոր Նարեկացիով վկայված բառացանկերը, որոնք, իմ կարծիքով, անչափ կարևոր են մի կողմից հոր և ուսուցչի հետ Նարեկացու ունեցած բառապաշարի ընդհանրությունը որոշելու, իսկ մյուս կողմից՝ ընդհանրապես Նարեկյան դպրոցի լեզվաշինարարական արվեստը և բառաստեղծական վաստակը հասկանալու համար: Ասենք նաև, որ բառգրքում կա ընդամենը մեկ բառ՝ հրահրության կամ հրահրության, որը վկայված է միայն Նարեկյան դպրոցի երեք հսկաներով՝ Խոսրով Անձևացիով, Անանիա և Գրիգոր Նարեկացիներով:

Հարկ է ավելացնել նաև, որ ընթերցողի դատին ներկայացվող բառացանկը թեև ինքնին շատ խոսուն է, բայց, իմ խորին համոզմամբ, բնավ չի սպառում Նարեկացու կերտած նոր բառերի քանակը: Բանն այն է, որ նախ՝ Նարեկացու ստեղծած ոչ բոլոր նոր բառերն են տեղ գտել բառարանում: Օրինակ՝ բանաստեղծը նկարագրելով բյուզանդական Վասիլ կայսեր արշավանքները, ասում է, որ հասավ «ի բուն բնակութիւն ծովածաւալ, ջրափակ անդրնդափոս ահագնապարիսպ բազմաբնակ քաղաքին և անմարտնչելի ամրոցին սքանչելոյն Կոստանդնուպօլսի» (էջ 377): Ընդգծված բառերից ջրափակ բառը ընդհանրապես չկա բառգրքում, իսկ մյուս երկուսը վկայված են հենց այս նախադասությամբ: Երկրորդ՝ բառարանում հարյուրավոր բառեր վկայված են միայն Նարեկացու և նրան հաջորդած հայ մատենագիրների երկերով: Ենթադրելի է, որ վերջիններս օգտվել են Նարեկացուց: Օրինակ, շնորհընկալ բառը վկայված է Գրիգոր Նարեկացու, Ներսես Լամբրոնացու և Հովհաննես Երզնկացու երկերով: Իսկ որ թե՛ Լամբրոնացին և թե՛ Երզնկացին քաջածանոթ էին Նարեկացու ստեղծագործություններին, վեր է ամեն կասկածից: Հետևաբար, բնական է ենթադրել, որ նրանք երկուսն էլ կարող էին օգտվել Նարեկացուց: Իհարկե բացառված չէ, որ XII-XIII դարերի հանճարեղ մտածողներ Լամբրոնացին և Երզնկացին անկախաբար ստեղծած լինեն նույն բառը, թեև դա քիչ հավանական է, որովհետև բերված օրինակներում, մասնավորապես Նարեկացուց և Երզնկացուց վկայված մտքերում, կան այլ ընդհանրություններ ևս: Ահա դրանք.

Նարեկացի	Երզնկացի
Եկն եհաս այրն	Ուրախ լեր լեա'նն Սեպուհ'
շնորհընկալ և պարգևաբեր:	շնորհընկալ և պարգևաշատ:

Թվում է՝ ընդհանրությունն այնքան ակնհայտ է, որ կասկած չի թողնում դրանց կապի մասին: Անշուշտ, մեկ, երկու, տասը, գուցե և մի քանի տասնյակ օրինակների դեպքում դա կհամարելիք պատահական զուգահիսություն, իսկ այս կարգի հարյուրավոր փաստերն արդեն բացառում են պատահականության հնարավորությունը: Ի հաստատումն ասվածի՝ բերեմ միայն երկու օրինակ. բառգրքում կա քոյին բառով կազմված ութ բառ (քոյինագործ, քոյինագէն, քոյինակրօն, քոյինահրաման, քոյինանիւթ, քոյինաշունչ, քոյինաստեղծ, քոյինատուր), որոնցից վեցը վկայված է միայն Նարեկացիով, քոյինագործ բառը՝ միայն Սկևռացիով, իսկ քոյինաստեղծ բառի համար Նարեկացուց բացի վկայված է նաև Ներսես Ընդհանրացին: Կամ թե միայն Նարեկացիով վկայված է հոգետոհմութիւն բառը, իսկ միայն Լամբրոնացիով՝ տոհմութիւն բառը: Ընդ որում, Լամբրոնացին բառը գործածել է «ընդ մարմնական տոհմութեամբ» բառակապակցության մեջ: Նույն ձևով բարեկրօն բառը վկայված է միայն Խոսրով Անձևացիով և Գրիգոր Նարեկացիով, իսկ բարեկրօնութիւն բառը՝ Գրիգոր Տղայով:

վստահ եմ, որ Նարեկացու կենսագրությանը քիչ թե շատ ծանոթ ամեն ոք գիտի, որ թե՛ Սկևռացին և թե՛ Ընդհակառակը, առաջել ևս Գրիգոր Տղան և Լամբրոնացին ոչ միայն քաջատեղյակ են եղել Նարեկացու գրական ժառանգությանը, այլև մեծ դեր են խաղացել դրա պահպանության ու տարածման գործում, իսկ իրենց ստեղծագործություններում կրել են նրա ազդեցությունը:

Միայլ կլի՞նի կարծել: Թե Նարեկացու քառաստեղծական արվեստը դրսևորվել է միայն նոր բաների ստեղծմամբ: Ընդհակառակը, այն ոչ պակաս, գուցե և ավելի, փայլատակել է նաև մինչ այդ հայտնի բաների նորոպի գործածությամբ, դրանց հանրահայտ իմաստների ընդլայնմամբ ու հարստացմամբ: Այդ է պատճառը, որ բառգրքում հազարավոր բաների համար այլևայլ հեղինակների հետ մեկտեղ բազմաթիվ օրինակներ են բերվում նաև Նարեկացու ստեղծագործություններից: Ավելին, երբեմն միևնույն բանի համար Նարեկացուց բերված օրինակների թիվը կարող է անցնել մեկուկես տասնյակից. օրինակ՝ դեմ քառհոդվածում դրանց թիվը հասնում է 19-ի:

Ավելին, Նարեկացին հղկել ու կատարելագործել է նաև իր օգտագործած աղբյուրների ընձեռած լեզվական նյութը: Այս տեսակետից չափազանց հետաքրքրական է հետևյալ փաստը. բառգրքում ոգիակողմն բանի համար մեկական օրինակ է վկայված Նարեկացուց և IV դարի բյուզանդական մատենագիր Եվագր Պոնտացուց: Բնականաբար, վերջինիս համապատասխան միտքը վերցված է նրա երկի հայերեն հնագույն թարգմանությունից, որը, կատարված լինելով հունաբան դպրոցին բնորոշ պատճենահանման սկզբունքով, մասամբ խորթ էր հայեցի մտածողությանն ու հայոց լեզվին: Համեմատության համար զուգադրաբար բերենք մեզ հետաքրքրող միտքը.

Եվագր

Է արդարութեան միաբանութիւն իմն և յօրակապութիւն ընդ ոգիակողմանն կողմն գործել:

Նարեկացի

Անու գնեսու հարուածոյ կարեւկեր խոցման յոգիակողմն կոյս:

Դժվար չէ տեսնել, որ ոգիակողմանն կողմն և յոգիակողմն կոյս արտահայտությունները բացարձակապես նույնն են ըստ բովանդակության, բայց էապես տարբեր են լեզվական տեսակետից. Նարեկացին, բնագրի կողմն բառը փոխարինելով կոյս հոմանիշով, այն ազատել է կրկնաբանության տաղտուկից, դարձրել ավելի բարեհունչ ու գեղեցիկ: Բնականաբար բանաստեղծի կատարած համանման աշխատանքը չի սահմանափակվում այս մեկ օրինակով:

Հնարավոր է, որ բառգրքում միայն Նարեկացիով վկայված ինչ-ինչ բաներ գործածվել են նաև նախորդ դարերի հայերեն աղբյուրներում, որոնք ի հայտ են եկել բառարանի հրատարակությունից հետո, սակայն վստահ ենք, որ դրանք մեծ թիվ չեն կարող կազմել և չեն նսեմացնի հրապարակվող բառացանկի արժեքը:

Քանի որ բառացանկը, ինչպես ասվեց, կազմվել է Հայկազյան լեզվի բառգրքի հիման վրա, ուստի պահպանված է վերջինիս ուղղագրությունը, որը կարող է մասամբ տարբերվել Նարեկացու երկերի 1840 թ. վենետիկյան հրատարակության ուղղագրությունից:

Բառացանկը կազմելիս բառգրքում նկատվել են առանձին վրիպակներ ու անընդհատություններ, որոնց մի մասը նշել ենք տողատակի ծանոթագրությամբ: Բացառված չէ, որ սույն բառացանկում նույնպես լինեն այդօրինակ վրիպակներ ու անընդհատություններ, որոնց համար հայցում ենք ընթերցողի ներողամտությունը և շատ ուրախ կլինենք այդ կարգի դիտողություններ ստանալ:

Վերջում պարտքս եմ համարում ասել, որ սույն բառացանկը կազմելու գաղափարը ծագել է ակադեմիկոս Գ. Բ. Զահուկյանի հետ նարեկացիագիտական հարցերի շուրջ ունեցած գրույցների ընթացքում, իսկ իրականացվելուց հետո արժանացել է նրա հավանությանը: Օգտվելով պատեհ առիթից՝ խորին երախտագիտությունս եմ հայտնում ականավոր լեզվաբանի՞՞ ինչպես այս առթիվ, այնպես էլ տասնամյակներ շարունակ իմ հանդեպ ցուցաբերած քացառիկ ջերմ վերաբերմունքի համար:

Ահագնակոշկոճ, Նար. Տաղ
Աղերսագոչ, Նար. Տաղ Ղզր (մ)*
Աղընթաց, Նար. Տաղ (մ)
Անծայրեմի, Նար. Տաղ յար (մ)
Ապճիո, կամ Ապըճիո, Նար. Տաղ
արմա (մ)

Ապրիշիմի, կամ Ապրիշմի, կամ
Ապրշմեղէն, Նար. Տաղ:

Արդինալուր, Նար. Տաղ յար (մ)
Արե՛կ, Նար. Տաղ Ղզր (մ)
Արթնաչեայ, Նար. Տաղ Ղզր (մ)
Արփիագարդեալ, Նար. Տաղ եկեղ (մ)
Արքունանճեմ, Նար. Տաղ յար (մ)
Աւաղիկ, Նար. Տաղ համբ (մ)
Բամբերգային, Նար. Տաղ արմա (մ)
Բոսորերանգեան, Նար. Տաղ
Բոցաշաւեղ, Նար. Տաղ
Բուրագուարթ, Նար. Տաղ
Դիմառ, Նար. Տաղ յար (մ)
Դիմիւ ելանել, Նար. Տաղ արմա (մ)
Եզեռակ, կամ Եզեռակի, Նար. Տաղ
յար (մ)

Եղաւորիմ, Նար. Տաղ (մ)
Եռաստոհչ, Նար. Տաղ արմա (մ)
Երագահասք, Նար. Տաղ յար (մ)
Երագգայից, կամ Թերագգայից,
Նար. Տաղ համբ (մ)

Երամաղ, կամ Երամաղի, Նար. Տաղ
արմա (մ)

Երիգապարգեւ, Նար. Տաղ Ղզր (մ)
Երիցօրեայ, Նար. Տաղ յար (մ)
Երփն առ Երփին, Նար. Տաղ յար (մ)
Երփնաթերթ, Նար. Տաղ (մ)
Երփնասուր, Նար. Տաղ արմա (մ)
Թեւատրոհաթեւ, Նար. Տաղ համբ (մ)
Իննաբար, Նար. Տաղ
Լերինաթիմո, Նար. Տաղ
Լիուլրումնօրէն, Նար. Տաղ յար (մ)
Խանդագորով լինել, Նար. Տաղ

Ղզր (մ)
Մաւալանամ, Նար. Տաղ
Մերածողով, Նար. Տաղ

Միծաղախիտ, Նար. Տաղ
Միրային, կամ Միրայնի, Նար. Տաղ
Մոցածագեմի, Նար. Տաղ
Կարմրածորձ, Նար. Տաղ
Կենաբարձ իւր, կամ Կենաբարձիւր,
Նար. Տաղ յար.

Կողինապատիր, կամ Կողիմնապա-
տիր, Նար. Տաղ յար.

Կորովաբար, Նար. Տաղ
Հագրէվարդ, Նար. Տաղ
Համբ, Նար. Տաղ
Համբերապատ, Նար. Տաղ
Հանրակայք, Նար. Տաղ
Հողմահնչել, Նար. Տաղ
Հրարփ, կամ Հրարփի, Նար. Տաղ
Ջորձածածուկ, Նար. Տաղ
Ճեմ, Նար. Տաղ յար.

Ճոխարան, Նար. Տաղ
Ճոխճեմ, Ճոխճեմեալ, Նար. Տաղ
Մահինաբողբոջ, Նար. Տաղ
Մանուածաւալ, Նար. Տաղ
Մանուշակաբեր, Նար. Տաղ
Մանրահեղեղ, կամ Մանրահեղի,

կամ Մանրահետի, Նար. Տաղ յայտն

Մաքրապետ, Նար. Տաղ
Մաքրինճեմ, Նար. Տաղ:
Մեսիատես, Նար. Տաղ Ղզր (մ)
Յայտաթորեալ, Նար. Տաղ
Յորդահեղու, Նար. Տաղ
Յուաբեր, Նար. Տաղ
Յոփինճեմ, Նար. Տաղ
Յոփինընթաց, Նար. Տաղ
Նարդինաբեր, Նար. Տաղ
Նորախնդիր, Նար. Տաղ
Նուաստախումբ, Նար. Տաղ
Օտուտեղիմաշնորհ, Նար. Տաղ
Օողշողեմի, Նար. Տաղ
Օրջանապտոյտ, Նար. Տաղ
Ոստագուարճ, Նար. Տաղ
Ոստինակտոր, Նար. Տաղ
Ովսաննայաբեր, Նար. Տաղ
Ուղխինահոս, Նար. Տաղ մկրտ.

* Փակագծերում նշված մ տառը նշանակում է տվյալ բառը գետնեկած է բառգրքի մնացորդը բաժնում:

Ուռամիջակ, Նար. Տաղ սայլ
 Պերճաբարոյ, Նար. Տաղ
 Սայլիկ, Նար. Տաղ
 Սարդիատունկ, Նար. Տաղ ծն.
 Սիրամայր, Նար. Տաղ ի յար. Ղզր
 Սիրայիսնունդ, Նար. Տաղ
 Սիրաշարժ, Նար. Տաղ ծն.
 Սիրաստեղնեալ, Նար. Տաղ
 Ստեղնաշիտակ, Նար. Տաղ
 Սրտանմիլիկ, Նար. Տաղ Ղզր
 Վարժենի, կամ Շարժվարժենի տե-

ղի, Նար. Տաղ
 Վեհիճանք, Նար. Տաղ
 Վերյարուցանել, Նար. Տաղ
 Տեղիարան, Նար. Տաղ
 Տնկիճագործ, Նար. Տաղ
 Բախագուարճ, Նար. Տաղ
 Բահիրաբ, Նար. Տաղ
 Իիթեղիճագուարթ, Նար. Տաղ
 Փայլենագարդ, Նար. Տաղ
 Փողփողենէջ, Նար. Տաղ

Գանձեր

Ածող կամ Ածող, Նար. [Գճձ]* եկեղ.
 Անհիթակիր, Նար. Գճձ խշ
 Անսխալաստեղծ, Նար. Գճձ եկեղ.
 Առաքելախումբ, Նար. Գճձ առաք.
 Արարչատես, Նար. Գճձ հոգ.
 Արուեստակցութիւն, Նար. Գճձ ա-
 նաք. և մրգ
 Արփիակերպ, Նար. Գճձ խշ
 Արփիանկար, Նար. Գճձ եկեղ.
 Գեղատխտր, Նար. Գճձ հոգ.
 Եգիպտակործան, Նար. Գճձ հոգ.
 Եռանձնաթիւ, Նար. Գճձ առաք. և մրգ
 Երկրակշռութիւն, Նար. Գճձ խշ
 Զարմանուհի, Նար. Գճձ եկեղ.
 Կանխապատմութիւն, Նար. Գճձ խշ
 Համանունակ, Նար. Գճձ եկեղ.

Հոգետոհմութիւն, Նար. Գճձ եկեղ.
 Հոգիաձիր, Նար. Գճձ եկեղ.
 Հոգիապայծառ, Նար. Գճձ եկեղ.
 Հրամանատուր, Նար. Գճձ հոգ.
 Մաղթողական, Նար. Գճձ հոգ.
 Մայրատախտակ, Նար. Գճձ եկեղ.
 Մարմնագոյք, Նար. Գճձ եկեղ.
 Յօժարընթաց, Նար. Գճձ եկեղ.
 Նախացուցակ, Նար. Գճձ եկեղ.
 Պատգամագրութիւն, Նար. Գճձ հոգ.
 Պատշաճակերտ, Նար. Գճձ եկեղ.
 Սկզբնաձեռն, Նար. Գճձ եկեղ.
 Սնտիածողով, Նար. Գճձ հոգ.
 Վարժապետական, Նար. Գճձ եկեղ.
 Տիեզերաճեղձոյց, Նար. Գճձ հոգ.
 Օրհնանուն, Նար. Գճձ խշ

Խրատական բանք**

Գիտաց առնել
 Թերաբան
 Թերակարգ
 Ժանգակիր
 Խելագարեցուցանել
 Հեշտավաստակ

Հեշտաքայլ
 Յաւակնոտ, Նար. Խր.
 առ Լեհ.
 Յիմարացուցանել
 Շիջական
 Շրջելաբար, Նար. Խր.

ըստ Լեհ.
 Փաղանգակամ, Նար.
 Խր. առ Լեհ.
 Փուրծ, Նար. Խր. առ
 Լեհ.

Համառօտիք բան խրատու***

Ախտաշարժութիւն
 Ականաճանգէտ
 Անկարգաւորաբար
 Գեղեցկացուցիչ
 Գերանճառ
 Գողակցութիւն

Դիրակատար
 Խոհագործ
 Հատընտիր լինել
 Հարել
 Հրակիր
 Մարգարտատիպ

Յոգնաբոյս
 Յոգնաշարժ
 Ռսկիանման
 Որոգայթադրութիւն
 Վարակումն

* Բառգրքում բացակայում է Գճձ մշումը:
 ** Բառգրքում կարճագրված է «Նար. Խր.» կամ «Նար. խրատ» ձևով:
 *** Բառգրքում կարճագրված է «Գր. հրահանգ» կամ «Գր. հր.» ձևով:

Մեկնութիւն Ո՛վ է դա ընթերցուածոյն Յորայ

Ահատրանամ	Ջագրակերութիւն	Հրաքուղիս
Ահեղաշուք	Ջագրակերպիլ	Հրագունիլ
Ադիսարկ	Թեթեանտիմ	Մարգարէամայր
Անհատապէս	Թեւատարած	Մեղսային
Անմերձակայ	Ժանտախօս	Յղիական
Առատաբանութիւն	Ժանտակերպութիւն	Նորասացիկ
Արինակերպիմ	Լուսաշիթ	Շանթածիգ
Արուսեկածեւ	Խաղաբանել	Որոտագոչ
Բարկանայթ	Խենթական	Ունականութիւն
Բոցակերպեալ	Խորանակապ	Պարշար
Գնդածեութիւն	Մածկապատել	Տաքր հատանել
Գրկաբերել	Մաղկաարտակիտեալ	Տիեզերագումար
Դիւածօն	Կալապետ	Յնծատեսակ
Եթերաճեմ	Կայթոտ	Քողածածուկ
Եկեղեցաբոյս	Կարմրալար	Քրիստոսիմաստ
Երկնաքուղիս	Կորստաբեր	Քրովբէատոչոր
Երկնագեղ	Հայկանման	

Մեկնութիւն Երգոց երգոյն Սողոմոնի*

Ականջաման	Եփեցական	Յատակատեսութիւն
Ամբ	Ջարմանատեսութիւն	Շլացումն
Անբարձ	Ընտրողականութիւն	Շուշանաբոյծ
Անբաւականելի	Լիախառն	Որոճալից
Անգոռոզաբար	Լսու լինել	Որոճողաբար
Անդնելի	Լքնում	Ջերմնեռանդնութիւն,
Անծոլութիւն	Խոշորած	կամ Ջերմն եռանդնու-
Անհասողութիւն	Կիզանոտ	թիւն
Անմարմնեղէն	Հանդիպաճայեաց	Սակաւամեռութիւն
Անյառնելի	Հոգիաբնակ	Սատանայանալ
Անորոզայթ	Հոտոտեցուցանեմ	Սիրակից
Անուշակերակրութիւն	Հրապարակատեսու-	Ստեղծութիւն
Անասանութիւն	թիւն	Ստուգատեսութիւն
Անցանկութիւն	Մահմետական	Սրահայեցութիւն
Արօրանալ	Մանրակրկիտ	Սրտացաւաբար
Աւաղանք	Միակնութիւն	Սրտեռանդն
Բազմակնութիւն**	Մօտաբնակ	Վայելչականութիւն
Բազմեփեաց	Մօտեման	Տաճարաշէն
Գոհաբանակից	Յատկապատու	Յանկատեսակ
Գոհացողակից	Յարապտուղ	Քաջաթուխ

* Բառգրքում կարճագրված է՝ «Երգ»:

** Բազմակնութիւն բառը եղել է նաև Նարեկացոց առաջ, իսկ ինքն ստեղծել է բազմակնութիւն:

Պատմություն և ճառ խաչի*

Ահագնապարիսպ	Աւետատու	Երկիրաձամեծար
Աղախնանուն	Բազկաձիգ	Երկկերպեան
Աղօտանուագ	Բազկաստածու	Երկնակերպ
Աճունաճիղ	Բազմադրուատ	Երկնաշնորհ
Ամայքանակ	Բազմատեսող	Երկնօրէն
Ամբարձաձիգ	Բազմունակ	Երկվերարկու
Ամենահարթ	Բանաճարակ	Երկրագումար
Ամենանկատ	Բարետրական	Երկրապատեան, կամ
Ամենանձուկ	Բարձրավանդակ	Երկրպատեան
Ամրոտեան	Բաւականաբոյս	Երկրապարփակ
Այլայլասեռ	Բեհեզագանգուած	Երջանկազարմեան
Այլանդակական	Բեհեզատիպ	Երրերգելի
Անաղօտական	Բերկրապատար	Երփնափայլ
Անանձուկ	Բերձրութիւն	Ջանազանակ
Անբերող	Բիրականառ	Ջանգակազանչ
Անդհափոս	Բնաքնակ	Ջուգածիրանի
Անդրագիր	Բոսորակայլակ	Ջուգայարմարեմ
Անդրանկարար	Գառնածին	Ջուգապարակցեմ
Անեղակերտ	Գարնանագեղ	Ընդարձակայարկ
Անխարիսխ	Գեղագրեմ	Թագադիտակ
Անկարօտանեմ	Գեղասաղարթ	Թագայօրէն
Անհատոր	Գեղեցկագիւտ	Իմաստապատում
Անձրեւասնունդ	Գեղերեսեմ	Ինքնաժառանգ
Անպատմական	Գեղերփնել	Իրօրէն
Անասանական	Գետնածածկոյթ	Լայնակայլակ
Աշխարհապարունակ	րարկու	Լեգեռնախումբ
Առագաստանուէր	Գերվարագրեմ	Լեռնահողով
Առագաստասպաս	Գիրապարար	Լիբիախառն
Առաքելագէտ	Գումարահողով	Լուսածագեմ
Առընկղմիլ	Դաքիրայօրէն	Լուսանորոգեմ
Արարչակիր	Դաժանաբոյս	Խաչապսակ
Արարչաստեղծ	Դառնաթորմի	Խառնախորթ
Արգասաւորեմ	Դաստիարակարան	Խստապինդ
Արգասանդաբեր	Դեղանկար	Խրթնածածկոյթ
Արեգակնօրէն	Դժնդակատեգ	Մաղիկընձիղ**
Արինագեղ	Դիպակակիտուած	Մաղկայօրինուորակ
Արինորակ	Դիրամոքելի	Միրանածուէն
Արծաթունակ	Եղականապէս	Կայտոունակ
Արձանակառոյց	Եղանակական	Կանթեղաբորբոք
Արմախարիսխ	Եղեռնութիւն	Կանխախանդէս
Արուեստահիւսակ	Երգագիր	Կապուտակատիպ
Արուեստայարմար	Երգագրեմ	Կարծրախարիսխ
Արտագծեալ	Երգողաբարբառ	Կարծրածածկոյթ
Արտաքնախորհուրդ	Երթումն	Կարծրաձեղուն

* Բառերքում երկուսը միասին կարճագրված են՝ «խչ»:

** Բնագրում՝ ծաղկընձիղ:

Կարմրայարմար
 Կենդանասպառ
 Կենսաչու
 Կենցաղականութիւն
 Համատակ
 Համբերատարր
 Համեղահամ*
 Հանգունապէս**
 Հանգչարան***
 Հանդիսակիր
 Հանճարախոյզ
 Հանրահոչակեմ
 Հաստախարիսխ
 Հարստական
 Հեզասաղարթ
 Հոգիատաիդ
 Հողախշտի
 Հրանշոյլ
 Հրաշագնիւն
 Հրաշակառոյց
 Հրաշաշնորհ
 Հրաշօրէն
 Հրացանկ
 Հրեշտականուն
 Ձեռնածուլեմ
 Ձեռնաստեղծական
 Ձեւակ
 Ձօնարան
 Ղամբարանշոյլ
 Ծախրանք
 Ծառագայթանշոյլ
 Ծարտարածիգ
 Ծեմարանօրէն
 Ծշգրտաբանութիւն
 Մահատեսակ
 Մահատիպ
 Մանրախոյզ
 Մարգարէածանօթ
 Մարգարէանառ
 Մարդադարման
 Մարդածոյլ
 Մարդկասերմ
 Մարտիրոսարան
 Մաքրարար
 Մեղսօրէն
 Մետաքսահիւս

Մթնակերպ
 Միամասնեայ
 Միապար
 Միատարրեմ
 Միջապիճդ
 Մշտատիւ
 Մովսիսագիր
 Մրգամատոյց
 Յայտանկատ
 Յանգունածատաշեալ
 Յառաջշարժութիւն,
 կամ Յառաջ շարժութիւն
 Յոգնապիսի
 Յօդատեսակ
 Նախակործան
 Նախահետեւող
 Նախամարդ
 Նախանկարեմ
 Նամակակիր
 Ներհակակիր
 Նմանահիւթ
 Նշանաբարձ
 Նոճ, Նոճեայ, Նոճի
 Նոճիհաճահ
 Նորանշոյլ
 Նորատեսութիւն
 Նորոգանուագ
 Նսեմաստուեր
 Օնորհաշառաւիղ
 Օնորհապատար
 Օնչականապէս
 Օոգիամէգ
 Օողշողիմ
 Օուտածիր
 Օոհնչ
 Օրջապարութիւն
 Օրջապարութեմ
 Ոսկեփայլ
 Ոսկեփառ
 Ոսկիակիր
 Ուժգնահնչակ
 Ուժգնապիրկ
 Ուխտակցութիւն
 Ուղերձումն
 Ուղխապարար
 Պայծառագարդեմ

Պայծառանշոյլ
 Պայծառապսակ
 Պատկանատեսակ
 Պատկառատեսակ
 Պատճենաբեր
 Պատուաստակիր
 Պարծեցուցանեմ
 Պարծունակ
 Պարկեշտակրօն
 Պարտակից
 Պիսիդոն
 Պնդակցորդ
 Պողպարագեւ
 Պոռուտիկ
 Պրակապատճէն
 Զրահոս
 Սանայիրասերմ
 Սարդենասեր
 Սաւառնումն
 Սեւեռակապ
 Սեւեռապէս
 Սիրասուր
 Սիրատեճչակ
 Սուրհանդակօրէն
 Սպիտակապատուաստ
 Ստեղնածիգ
 Ստուգագիր
 Ստուերագիծ
 Ստրկածիւն
 Ստրկայիւն
 Սրագործ
 Սրբաբեհեգ
 Սրբագնագարդ
 Սրբակցորդ
 Սրբասահման
 Սրովբէաբնակ
 Սրովբէագաւիթ
 Սքանչելուղէշ
 Սօսասարաս
 Վաղաբարբառ
 Վաղագեկոյց
 Վաղասասանական
 Վայելչատերեւ
 Վերաքօղել
 Վիմախարիսխ
 Վիմահողով

* Բառգրքում նշված է՝ Նար. Ղզ, որը ճիշտ չէ, որովհետև նախ՝ Մատյանը չունի Ղզ գրուի, և երկրորդ՝ բառս գործածված է խաչի ներքողում, ուստի գետեղել ենք Քամապատասխան բառացանկում: ** Նույնպես: *** Նույնպես:

Վսեմապէս
Վտակարբու
Վրնչողութիւն
Տապարատաշ
Տարաբաժանիմ
Տարերական
Տերեասաղարթ
Տիեզերապատ
Տիրահրաւէր
Տիրապատիւ
Տիրաւանդ
Րոպէ*
Ծօղամատոյց**

Փայլակնանշոյլ
Փայլակնընթաց
Փոհագացի
Փրկանիւթ
Փրկութեանակիր
Քաղցրածաղիկ
Քանդակագործել
Քառադիր
Քառադրութիւն
Քառալծորդ
Քառակղեան
Քառանման
Քառաշուրթն

Քառաքանակեան
Քարապատուար
Քուաքատակեմ
Քրիստոսային
Քրիստոսանկար
Քրիստոսապահեստ
Քրիստոսառաք
Քրովբէաքնակ
Քրովբէանիւթ
Քրովբէանկար
Օգոստաքնակ

Գովեստ կուսի***

Ամբողջապէս
Ամրակառոյց
Անամանակ
Անիծապարտ
Անկից
Անձնատոչոր
Անձրեւածիր
Անփորձական
Աստուածագացիկ
Ասրաբոյս
Արձանունակ
Արփիականիզբն
Բազմագովեստ
Բանագովութիւն
Բացածանուցանեմ
Բեղմնատրեմ
Բիրաբեղում
Բնակակիր
Բոսորաբուղի
Գգուանք
Գեղապճնեալ
Գեղմնաքարձ
Գերազգուեմ
Գերօրինակ
Գրկարան
Դժուարընդել, կամ
դժուարընտել
Երկնահանճար

Երկնիչ
Երկնուղեշ
Երկրալիր
Ըղձածայնութիւն
Իղարան
Լայնածիգ
Լուսակերտ
Լուսասահման
Լուսարփի
Խնայական
Ծաքումն
Կաթնածիր, Կաթնա-
մատոյց
Կշորդել
Կշումն
Համազարմ
Համաստեղծ
